Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՑՐԻՆԻ

(ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒՅ)

(Երկրորդ տպագրություն)

891.71
O-71

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

19 NOV 2010
5304
891.71
Ս-71
1002/6625

ՅՐԻՆԻ

(ՕՍՏՐՕԳՕՐՍԿՈՒՅ)

(Երկրորդ տպագրութիւն)

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

03 SEP 2013
14571

ՎՄՎԳԷ

Дозволено Ценз. С. Петербургъ, 30 Сентября 1904 г.

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ, 4.

Բագուի Հայոց
Հոիփսիմեան Դպրոց
Էջեղ. Փակ. (արիորդաս)

ՑՐԻՆԻ

Այժմեան սերունդը փոշի կը դառնայ,
Կանցնեն շատ դարեր, կը գայ նոր սերունդ
Եւ երախտագէտ սրտով ահա նա
Կը յիշատակէ միշտ բո սուրբ անունդ։

Երանի՜ նրան, ով կռւի դաշտում
Հայրենեաց համար իր շունչը փչեց։
Ազգակիցների սրտի խորքերում
Կանգնած է նրա արձանը անեղծ։
„(Ցրենի“ Ողբ՝ Կերների, Աբ. Ե. Տես. Բ.)

Ամբողջ Եւրոպան տասնվեցերորդ դարում դողում էր Թուրքերի առաջ։

1453 թուականն էր, որ Ֆաթիհ Սուլթան Մեհեմեթը առաւ Կոնստանդինուպոլիսը, որը մինչև այդ ժամանակ ուղղափառ Բիւզանդիայի մայրաքաղաքն էր։ Այսպիսով այդ քաղաքը, որ առաջ պատկանում էր քրիստոնեաներին, այժմ դարձաւ Թուրքերինը, նոր մահմեդական տէրութեան մայրաքաղաքը։ և խաչը, որն առաջ փայլում էր ս. Սոֆիայի տաճարի գմբեթին, այժմ տեղի տուեց տաճկական կիսալուսնին։

Բայց Թիւրքիան և՛ս առաւել ահարկու դարձաւ քրիստոնեաների համար սուլթան Սիւլէյման Բ.-ի ժամանակ։

Այդ խստասիրտ և ինքնասէր սուլթանը կարծում էր, թէ իր բոլոր փառքն այն պիտի լինի, որ ամենքը խոնարհուեն և դողան իր առաջ։ Նուաճել բոլոր աշխարհը, կազմել մի ահագին մահմեդական տէրութիւն, որի միակ ղլուխը ինքը լինէր — ահա այդ սարսափելի մարդու միակ ցանկութիւնը։

Նրա ամբողջ կեանքն անցել էր փառաւոր յաղթութիւններով. 44 տարուայ թագաւոր էր նա և միայն մի անգամ էր յաղթուել — Վիէնայի մօտ[1]), և այդ օրւանից երդւել էր վաղ թէ ուշ սաստիկ պատժել դերմանացիներին:

Հասան վերջապէս սուլթանի ծերութեան օրերը. 1566 թուականին, երբ պատահեց այս անցքը, որը մենք պատմելու ենք, նա արդէն 70 տարեկան էր:

Տարիքն և անհանգիստ կեանքը սաստիկ ազդել էին նրա վրայ. երեսը ծածկւել էր կնճիռներով, ոյժը նուազել. ծեր հասակի տկարութիւնները թուլացրել էին նրա զօրեղ մարմինը, բայց միտքը, ոգին դեռ առաջուայ պէս զւարթ էր: Ծերունի սուլթանը կամենում էր կնքել իր փառաւոր կեանքը մի այնպիսի քաջագործութեամբ, որ զարմացնէր ամբողջ աշխարհը և յետագայ սերունդին. նա կամենում էր, որ իր գործերի յիշատակը նոյնքան անսասան ու փայլուն մնայ, որքան անսասան ու փայլուն է արեգակը...

Երդումը, որ արել էր ծերունի սուլթանը, երբ դերմանացիներն այնպէս յանդգնօրէն դիմադրեցին մեծ մարգարէի փոխանորդին, հանգստութիւն չէր տալիս նրան:

Սուլթանը մի օր հարցրեց իր բժիշկ հրէա Ղէ՛ի՛ին, թէ արդեօք քանի՞ տարի դեռ կեանք կունենայ:

Ծերունի բժիշկը շփոթուեց այս անակնկալ հարցումից և մտածութեան մէջ ընկաւ. սակայն զգուշութեամբ և ակնարկներով հասկացրեց սուլթանին, թէ առողջութիւնը վատացել է, ոյժերը թուլացել են, բայց, և այնպէս խոստացաւ տասը տարուայ կեանք, եթէ միայն սուլթանն իրան պահպանէ, չը յուզւէ և հանգիստ անցկացնէ կեանքի մնացորդը, վայելելով նախորդ յաղթութիւնների փառքը:

Բայց սուլթանը թոյլ չը տւեց ծերուկ բժշկին իր շողոքորթիչ խօսքերը շարունակելու:

— Լռի՛ր, ծերո՛ւկ, լռի՛ր, բացականչեց նա. դո՛ւ խոստա-

1) Վիէնան այդ ժամանակ դերմանական կայսրութեան մայրաքաղաքն էր:

նում ես ինձ տասը տարուայ կեանք, եթէ հանդիստ ապրեմ. բայց մի՞թէ չը գիտե՞ս, որ սուլթան Սիւլէյմանը առանց գործի ապրել չէ՛ կարող. ես սովոր եմ դժւար ու յանդուգն գործերի և չե՛մ կամենայ կենդանի դերեզման մտնել: Ինձ համար չէ՛ տասը տարուայ կեանք ու հանգստութիւնը. մի տարի միայն կապրեմ ես, բայց այդ մի տարուայ ընթացքում կը դարմացնեմ ամբողջ աշխարհը մի այնպիսի յաղթութեամբ, որի նմանը մինչև այսօր դեռ տեսնւած չէ: Վիէնայի աւերակների վրայից օրէնքներ կը տամ դարերին և իմ հարուածների տակ կրնկնի անհաւատ Գերմանիան. թող համայն աշխարհն իմանայ, որ Մեծն Սիւլէյման մեռնում է և թո՛ղ հրդեհւած Վիէնան լուսաւորէ իմ ճանապարհը դէպի դերեզման:

Այս ասելով, սուլթանն իսկոյն խորհուրդի կանչեց իր բոլոր վեզիրներին ու փաշաներին, որոնց հետ նա շատ յաղթութիւն էր տարել և յայտնեց նրանց Վիէնայի վրայ գնալու ցանկութիւնը:

— Արդէն երկու տարի է, որ հռոմայէցոց[1]) Մաքսիմիլիան կայսրը հարկ չէ վճարում. նա տիրել է վերստին Տոկայի ամրոցին, որ մի ժամանակ իմ հզօր իշխանութեանս էր պատկանում: Հունգարիան[2]) չի ուզում մեր մեծ մարգարէի օրէնքները ճանաչել: Այդքանը միայն բաւական է, որպէսզի, առանց այլ ևս մի բոպէ յետաձգելու, գէնք վերցնենք նրանց պատժելու համար... Այսպէս է ցանկանում ուղղափառների տէրը և ոչ ոք չի՛ կարող ընդդիմանալ նրա հզօր կամքին... և ամենից առաջ նա կա՛ռնէ ու կը կործանէ Հունգարիայի Սիդէդ բերդը:

Զօրապետներն իզուր աշխատում են համոզել սուլթանին, որ չը գնայ այդ բերդի վրայ, ասելով, որ այդ բերդը պաշտպանում է իշխան Նիկոլա Զրինին, որ ուղղափառների ոխե-

1) Այն ժամանակւայ դերմանացոց կայսրը ասւում էր և հռոմայէցոց կայսր:
2) Գերմանիայի հարաւ-արևելեան մասը:

բիմ թշնամին է և անտարակոյս շատերի կորստեան պատճառ կը լինի։

Ինքնահաւան սուլթանը ականջ չի դնում զօրապետների խոհեմ խորհուրդներին։

— Ո՛չ ոք չի կարող շեղել ինձ իմ որոշած ճանապարհից, բացականչում է սուլթանը. ի՞նչպէս կարող է մի որևիցէ Ցրինի արգելք լինել իմ յանկութեան։ Պիտի Վիէնա գնանք ուղղակի Սիգիդի վրայով. այս է իմ կամքը։

Խորհուրդը միայն լռութեամբ պատասխանեց այդ ահարկու և սպառնալից խօսքերին. և սուլթանի երկու հարիւր հազարից բաղկացած ահագին բանակը ճանապարհ ընկաւ քրիստոնեաների դէմ ծերունի տիրոջ համար մի վերջին փառք, իսկ իրանց համար անուն և յաղթանակ ձեռք բերելու։

Դանուբ գետից ոչ հեռու, որը Թուրքերի և Հունգարացիների հողերը բաժանում էր իրարից, Դրավա[1] գետի ափին, բարձրանում էր Հունգարացոց Սիգիդ բերդը։ Նրա մի մասը շինուած էր սարի և մի մասն էլ հովտի վրայ. քաղաքը բաժանւում էր երկու մասի, առաջին մասը հին քաղաքն էր, այստեղ էր նաև ամրոցն ու դղեակը, իսկ երկրորդ մասը նոր քաղաքն էր, որտեղ անպաշտպան տների մէջ ապրում էին խաղաղ քաղաքացիները։

Այս բերդի հրամանատարը Հունգարացի իշխան Նիկոլա Ցրինին էր։ Նա յայտնի էր իբրև քաջ և հայրենասէր զինուոր. նրա անունը հռչակւել էր բազմաթիւ յաղթութիւններով Թուրքերի դէմ, որոնք նոյն 1566 թուականին սուլթանի հրամանատարութեամբ անցել էին Դանուբ գետը և իրանց հրոսակներով քարուքանդ արել ամբողջ Հունգարիան։

Ցրինու ընտանիքը մեծ չէր. նա ունէր մի որդի, որը ծառայում էր կայսերական զօրաբանակում և մի ջահիլ աղջիկ, Հեղինէ անունով, որը իր մօր Եւայի հետ ապրում էր ամրոցում։

1) Դրավա գետը Դանուբի ճիւղն է,

Այդ երկու կինն, ըստ երևոյթին, շատ քիչ էին իրար նրման, մայրը, ինչպէս արժանաւոր կողակից կռիւներում ճերմակած ամուսնու, երեխայութիւնից սովոր էր պատերազմական փոթորկալից կեանքի բոլոր վտանգներին, և իր մարդու պէս, պատիւն ու հայրենիքին հաւատարիմ լինելը վեր էր դասում ամեն բանից։ Աղջիկը, ծնողների սիրելին, մեծացել էր հայրենական խաղաղ յարկի տակ մի այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեաների և մահմետականների մէջ, դարաւոր անընդհատ կռիւներից յետոյ, մի առժամանակ խաղաղութիւն էր տիրել։ Մեծանալով զգուանքով և փաղաքշանքով, նա կարծես ստեղծուած էր միայն ընտանեկան անվրդով ու մեղմ ուրախութեան համար, որով պիտի երջանկացներ այն մարդուն, որը կ՚արժանանար նրա կուսական ջերմ սիրոյն։

Իսկ մարդը հեռու չէր. և օրիորդը սիրեց ջահիլ ու գեղեցկադէմ Լորենցո Իւրանիչին, որը իր հօր ամենասիրելի և քաջ սպան էր։

Ի զուր Հեղինէն աշխատում էր ծածկել իր սէրը. մօր զգայուն սիրտը հասկացաւ աղջկայ զգացումները։ Եւան ուրախութեամբ պատրաստ էր օրհնելու նրանց միութիւնը, բայց պատերազմը արգելք եղաւ այդ ամուսնութեան։

Վաղուց արդէն քաղաքացիները նկատել էին, որ ամրոցում ու քաղաքում եռանդով պատրաստւում են պաշտպանութեան. թէ ինչու համար էին այդ պատրաստութիւնները, նրանք չը գիտէին և չէին էլ համարձակւում այդ մասին խօսք բաց անել Ցրինու հետ, որովհետև լաւ գիտէին, թէ նա չի սիրում իր պատերազմական գործերի մասին խօսել։

Մի օր, յանկարծ, զինուած, բայց սովորականի պէս հանդիստ, նա մտնում է կանանց սենեակը և յայտնում իր կնոջն ու աղջկանը, թէ Թուրքերի զօրքն արդէն շատ մօտիկ է քաղաքին։

Հեղինէին այդ լուրը շատ վախեցրեց. մայրն իսկոյն հասկացաւ, որ ամրոցին պաշարումն է սպառնում և տեսնելով, որ ամուսինը եկել է նրանց հանդստացնելու, ասաց.

— Ուղիղն ասա, Ցրինի՛, կարող է ամբոցը դիմադրել, թէ ոչ։ Դու ինձ լաւ ես ճանաչում, ես արդէն արժանի եմ եղել քո վստահութեան, այդ պատճառով ուզում եմ ճշմարիտն իմանալ։ Վստահ եղիր, որ քո կինը վտանգներից վախեցողը չէ։ Ես վտանգների սովոր եմ և մէջս այնքան ոյժ կը լինի, որ կարողանամ քեզ նման հերոսին արժանի կին լինել։

— Հանգի՛ստ եղիր, Հեղինէ՛, քո հայրն ու նրա բարեկամները դեռ չեն մեռել, ուստի ոչնչից երկիւղ կրելու պատճառ չունես։

Բայց ուղիղ որ վտանգը մօտեցել էր։ Մի գիւղացի, թշնամուց փախչելով, լուր բերեց, որ սուլթան Սիւլէյմանն անթիւ զօրքով ուղղակի գալիս է Սիգիդի վրայ։

Իսկ նրա եաւից Իւրանիչը ներս մտաւ և յայտնեց, թէ սուլթանն արդէն անցել է Դրաւան և ամբողջ երկիրը աւերում է սրով և հրով։

— Տո՛ւր ինձ, Ցրինի, աւելացրեց Իւրանչը, մի գունդ քաջ ձիաւորներ. սիրտս վառւում է, ուզում եմ կռւեմ. թող տուր ինձ այդ չարագործ դաղաններից հայրենիքիս վրէժը առնեմ։

Հեղինէի սրատաճիլիկ ազազակն եղաւ երիտասարդի այդ համարձակ խօսքերի միակ պատասխանը։

— Մի՛ տխրիր, Հեղինէ՛, շարունակեց Իւրանիչը, պատի՛ւն է ինձ կռւի դաշտ կանչողը։ Ա՛յժմ, միայն այժմ կարող եմ քեզ առաջարկել իմ ձեռքը և համարձակ յայտնել քո հօրը, որ քեզ սիրում եմ։

Ես բացի այս սուրը ուրիշ բան չունեմ, բայց դո՛, ծե՛ր զինուոր, շատ անգամ ես ինձ ասել, թէ քաջ մարդը ամենամեծ պատիւների է արժանի. իմ մէջ կայ ոյժ և արիութիւն. թո՛յլ տուր և ես կռւի դաշտում ցոյց կը տամ, որ արժանի եմ փեսադ լինելու։

— Իմ պատասխանը յետոյ կիմանաս, ասաց Ցրինին, իսկ այժմ ամենից առաջ ինձ հարկաւոր են քեզ պէս արի զինուորներ, որոնց կարողանամ յանձնել հունգարիայի բաղդը... Վե՛ր առ հազար հետեւակ և հինգ հարիւր ձիաւոր. թող քեզ

հետ գնան իմ զօրապետներից ամենահմուտները Սլապին և Հապրուդովիչ և նրանց հետ միասին դո՛ւրս եկ Սիւլէյմանի դէմաւոր զօրավար Մէհեմետի դիմաց։ Քո գնդի պէս փոքրաթիւ զօրքի յաջողութիւնը կախւած է միայն յարձակման արագութիւնից։ Թող թուրքերը իմանան, որ Սիգիդը նրանց թւից չը վախեցաւ։ Գնացէ՛ք, Աստուած օգնական լինի ձեզ. յաղթանակով վերադարձէ՛ք։

Հիացմունքով լսում էր երիտասարդ սպան Ցրինու խօսքերը և երբ վերջացրեց, Իւրանիչը, դիմելով հարսնացուին, ասաց.

— Մնաս բարև, Հեղինէ՛, չմոռանաս յիշել ինձ քո աղօթքի մէջ. քո աղօթքը կը պահպանի ինձ կռւի դաշտում. հաւատացած եղիր, որ ո՛չ ոք մեզ իրարից չի բաժանի. ո՛չ նոյն իսկ մահը, եթէ Աստուած ցանկանայ մահ ուղարկել մեզ։ Ո՛վ սիրս ունի, չի կարող անգործ մնալ, երբ հայրենիքին վտանգ է սպառնում...

Այս ասելով, նա հանեց սուրն ու դուրս եկաւ սենեակից. խեղճ Թուասիրտ աղջիկը անշնչացած ընկաւ մօր գիրկը, միայն իմանալով, որ իր սիրելին վտանգի է ենթարկւում...

Հեղինէն տխուր էր. ծանր նախազգացումը մաշում էր նրան, ամեն կողմից նա միայն վտանգ էր երևակայում իր սիրելու համար։ Ի բնէ հանդարտ բնութեան տէր լինելով, նա չէր կարող իր մօր պէս աներկիւղ լինել և հաշտւել վտանգով և ահով լիքը կեանքի հետ։ Հեղինէն կարող էր թանգագին ամուսին լինել խաղաղ և հանդարտարարոյ քաղաքացու համար. նա կարող էր առօրեայ ծանր աշխատանքներում նրա համար կատարեալ ուրախութիւն լինել և, իբրև ամենաքնքոյշ մայր, սնուցանել և մեծացնել նրա զաւակներին, իմանալով միայն այ, ինչ կատարւում է իր կտուրի տակ և ոչ մի գաղափար չունենալով այն ամենի մասին, ինչ որ կատարւում է Աստուծոյ լոյս աշխարհում։ Նրա սէրը եսական սէր էր. ինչպէս ինքը պատրաստ էր իր ամբողջ կեանքը, սիրան ու միտքը նուիրել իր մարդուն, նոյնը պահանջում էր նրանից իր վերաբերմամբ։

— Դու սիրում ես Լորենցոին, մխիթարելով ասում էր նրան մայրը, բայց ոչ ինչպես հերոսի, այլ ինչպես մի քնքոյշ փեսացուի. դու մոռանում ես, որ ինչքան էլ քեզ սիրելու լինի, բայց և այնպես նրա համար պատիւն և հայրենիքը աւելի թանգ պէտք է լինեն և որքան մեծ լինի նրա բերած զոհը հայրենիքի և պատուի համար, նոյնքան աւելի մեծ կը լինի նրա անունն ու փառքը: Եթէ դու հերոս հօրդ արժանի աղջիկ լինէիր, եթէ դու սիրէիր Լորենցոին այնպէս, ինչպէս պէտք է սիրէ Ցրինու պէս մարդու աղջիկը, այն ժամանակ քեզ կը հրապուրէր ոչ թէ փեսացուիդ դեղեցկութիւնը, կամ թէ լեզուի քաղցրութիւնը, այլ նրա սրտի վեհ ղլացումները, դիւցազնական անարատ պատիւը:

Մինչդեռ մայրն այսպէս մխիթարում էր իր առն նախազգացումներով տառապող աղջկան, բաղդը նրա համար պատրաստում էր մի այնպիսի մխիթարանք, որ էր և ոյժ էր ներշնչում նրա թոյլ հոգուն:

Նրա սիրելի Իւրանիչը, որի համար տերևի պէս դողում էր աղջկայ սիրտը, հէնց առաջին անգամ թշնաւուն պատահելիս, անմահ փառքով ծածկեց իր անունը: Իր չնչին զնդով զարմանալի անվեհերութեամբ նա յանկարծ յարձակուեց Մահմետի ահագին բանակի վրայ և, շփոթեցնելով թշնամուն, չորս հազար մարդ կոտորեց, իսկ մնացածներին փախցրեց. փախչողներից շատերը իրանց մեծ զօրապետի հետ, ընկնելով ճահիճները, խեղդուեցին, շատերը գերի ընկան և ամբողջ բանակը բոլոր հարստութիւններով աւար մնաց երիտասարդ հերոսին:

Բոլոր ծերունի զինուորները, սպաներն ու մինչև անգամ գերի ընկած թշնամիները գովում էին նրա քաջասարութիւնը. իսկ Ցրինի, այդ ծերունի զինուորը, արտասուքն աչքերին, ջերմագին գրկելով երիտասարդ հերոսին, ասեց.

— Քո քաջութիւնը միշտ կենդանի կը մնայ հայրենի երգերում. ես ինքս անձամբ առաջարկում եմ այժմս քաջիդ այն,

ինչ որ առաջ մերժում էի. դու իմ աղջիկն էիր ուզում, առ նրան, արժանի՛ երիտասարդ և բաղդաւոր եղիր:

Երջանիկ հայրն արդէն օրհնում էր իր առաջը չոքած փեսացուին ու հարսին, երբ յանկարծ դրսից լսեցին նորեկ սուրհանդակի փողի ձայները: Ամենքը դիմեցին լսաամուտը և տեսան երիտասարդ սուրհանդակ Պետրոս Բիլակուն, որ կայսրի քաջ սպաներից մինն էր. սենեակը մտնելով երիտասարդ սուրհանդակը, Ցրինուն յանձնեց մի ծրար, որ կայսերական դրոշմ ունէր վրան:

Կայսրի նամակը մխիթարական չէր. Ծերունի զօրավարը օգնութիւն էր խնդրել, բայց կայսրը կարական մերժում էր, չը նայելով, որ բոլոր զօրքը ամեն տեղից հաւաքել էր Վիէնա, բայց զղոյշ Մաքսիմիլիանը (այն ժամանակւայ կայսրը) կարծում էր, որ մայրաքաղաքը դեռ բաւականաչափ ապահովուած չէ և այդ պատճառով նա իր յոյսը դնում էր քաջ հունգարացիների հաւատարմութեան վրայ, վստահ լինելով, որ նրանք պատրաստ են մեռնելու իրանց հաւատի և հայրենիքի համար:

Խոր մտածմունքների մէջ ընկաւ Ցրինին... Կայսրի միտքը հասկանալի էր. Սիգիդ բերդը, որքան կարելի է, երկար ժամանակ պիտի դիմադրէ Թշնամու յարձակման առաջն առնելու համար, որպէս զի կայսերական զօրքը կարողանայ պատրաստուել և բոլոր ոյժով դիմադրել Սիւլէյմանի հրոսակներին. Սիգիդը, յատնի բան է, պիտի վերջապէս կամ ընկնի, կամ անձնատուր լինի թշնամուն: Այսպէս թէ այնպէս, նա պէտք է փրկարար զոհ լինի հայրենիքի համար և այդ զոհը լինելու պատիւը կայսրն առաջարկում է իր փորձուած և հաւատարիմ ծառային, իշխան Նիկոլա Ցրինուն և Ցրինին պարծենում է այդ պատուով: Նա ամեն րոպէ պատրաստ է իրան զոհ բերելու հայրենիքին, բայց ի՞նչ անէ արդեօք նա իր ընտանիքը կնոջն ու աղջկան. յայտնի բան է, նրանց իսկոյն պէտք է ուղարկել Վիէնա, կայսրի մօտ... Բայց նկատելով, որ այդպիսով ժողովուրդը կը վհատի, յետածգեց նրանց Վի-

Էնա ուղարկելը։ Միևնոյնն է... Թող նրանք էլ մնան... պարիսպն ամուր է, ժողովուրդը փորձված։ Ամբոցն առաջապահ կռիվներում արդէն դիմացել է երկու խիստ պաշարումների։ Ծայրայեղ դէպքում գաղտնի անցք կայ, որտեղով նրանք կարող են ժամանակին դուրս գալ. բացի այդ, ո՞վ է իմանում, գուցէ կնոջ սրտում ևս այնքան ոյժ գտնուի, որ կարողանայ անվախ և փառքով մեռնել... Ուրեմն թող նրանք էլ մնան այստեղ։ Ո՞վ հայրենիք, այս կռուում ես ցոյց կը տամ քեզ իմ բոլոր հաւատարմութիւնը։ Ես քեզ զոհ եմ բերում բոլորը, ինչ որ ինձ համար թանգ է — աղջիկս ու կինս։ Աստուծոյ սուրբ հաւատի համար ոչ մի զոհ ծանր չը պիտի գայ մեր աչքին։

Ցրինու կարծիքն իր ամուսնու մասին սխալ չէր։ Երբ Բիլակին Եւայի ներկայութեամբ խորհուրդ էր տալիս նրան կանանցն ուղարկել կայսրի մօտ, Եւան ասաց.

— Ո՛չ, Ցրինի, ո՛չ. թող տուր ինձ այստեղ մնամ, ինձ մի՛ ուղարկի՛ր այնպիսի ժամանակ, երբ ամուսնուս գլխին փորձանք է գալիս։ Կինը պարտական է մասնակից լինել իր ամուսնու վտանգին։

— Բայց, իշխանուհի, խօսքը կտրեց ծերունի Սլապին, դուք միք մոռանայ, որ աղջիկ ունէք։

— Նա էլ պիտի ցոյց տայ, որ սիրել գիտէ, պատասխանեց դիւցազնուհի կինը։

Եւ Հեղինէն, այդ առաջապահ թոյլ, քնքոյշ ու վախկոտ արարածը, հիմա ոգևորուելով մօր և փեսայի օրինակից, մի անյայտ ոյժ զգաց իր մէջ և ասաց.

— Հա՛յր, աղաչում եմ, թո՛յլ տուր մենք մնանք այստեղ։

Զուր անցան բոլոր զօրավարների ջանքերը, որոնք յորդորում էին կանանց մի առժամանակ հեռանալ ամբոցից։

Ցրինին կանգնած, լուռ նայում էր, խոյս տալով կնոջ ու աղջկայ հայեացքներից. արտասուքի կաթիլները փայլում էին նրա աչքերում, իսկ կանայք չոքած նրա առաջ, համբուրելով ոտներն, ասում էին.

— Թո՛յլ տուր, թո՛յլ, մենք մնանք այստեղ...

Վերջապէս, Ցրինին, այլ ևս զսպել չը կարողանալով իրան, պատասխանեց.

— Այո՛, դուք կը մնաք։

— Իսկ մենք, եղբայրնե՛ր, հիմա դառնանք մեր զորձերին։ Ո՛վ կարող է զէնք վերցնել, հաւաքեցէ՛ք ամենքին հրապարակը. ես այն ժամանակ կը յայտնեմ ձեզ հրապարակով կայսեր հրամանը և իմ վերջնական որոշումը։

— Իսկ դո՛ւ, ամուսի՛նս, բե՛ր իմ պատերազմական զօտին և ինքդ զգեստաւորի՛ր ինձ արիւնահեղ խնջոյքի համար... օրհասական բոպէն հասել է...

Սիգիզի հրապարակը լիքն էր զինուած ժողովուրդով. քաղաքի դռները փակուած էին և բոլոր թնդանօթները շարուած պարիսպների վրայ։ Աշտարակի պահապանը վազուց էր իմացուել, որ հեռուում թուրք խումբեր են երևացել։ Հունգարական հինգ գիւղ այրուում էին... Թշնամիների յարձակումը մօտենում էր։ Ամբոխը յուզուած սպասում էր իր ծերունի զլխաւորին։ Սպաները միմեանց պատմում էին, որ ոչ մի ժամանակ իշխանին այսքան հանդարտ և անխռով չէին տեսած։ Վերջապէս ահա՛ և նա... բոլոր զօրքն ու ժողովուրդը կարծես թէ քարացել էին. հազարաւոր աչքեր ուղղուած էին նրան։ Նրա աչքերը վառուում էին հրաշալի բոցով։ Նրան ոգեւորողը կռուի ծարաւը չէ՛ր, այլ այն վճիռը, որով գիտակցաբար նա իր կեանքը հայրենիքին զոհ էր բերում։ Հանդիսաւոր սպասում է նա եկող վտանգներին, որոնց առաջին օրինակները նշմարուում է մօտակայ այրող գիւղերի ծխի և արիւնափայլ լոյսի մէջ։ Այդ դիւցազնական անխռովութիւնն ազդում է նաև նրան շրջապատող բոլոր զօրքի և ամբոխի վրայ։ Վերջապէս իշխան Նիկոլա Ցրինին սկսեց խօսել զօրքի հետ այսպէս.

«Զօրականնե՛ր.

«Դուք, որ այստեղ ժողովուած էք, ականջ դրէք ձեր մեծաւորի խօսքերին։

«Թուրքերի սուլթանը ահագին զօրքով գալիս է Սիգիդի վրայ. նա սպառնում է կործանել և փչացնել մեր բերդը. եղբայրնե՛ր, զինվե՛նք քաջութեամբ. մեր արիւնակից եղբայրները դեռ պատրաստ չեն թշնամու առաջը դուրս գալու, այդ պատճառով չեն կարող մեզ օգնութիւն հասցնել շուտով, բայց նրանք յոյս ունեն, որ հաւատի, հայրենիքի և ազատութեան համար մենք մեր կեանքը չե՛նք խնայի և մեր սուրբ եկեղեցին անհաւատների ձեռքը չենք տայ։ Թշնամու ոյժը մեզ համար երկիւղալի չէ. նրանց զօրքի բազմութիւնը թող չը վախեցնէ մեզ. մտաբերեցէ՛ք, որ ի՛նչքան էլ մեծ լինի ծովը, բայց և այնպէս նա չի՛ կարող ամուր ժայռը տեղիցը շարժել. մի՛ վախենաք թշնամու բանակից. մեր կողմն են Աստուած և նրա սուրբ հրեշտակները. ամբողջ քրիստոնէութիւնը երկիւղով և յուսով նայում է մեզ, Աստուծոյ ընտրեալներիս վրայ և աղօթում, որ Ամենակարողն օգնէ մեզ յաղթել մեր թշնամիներին. ուրեմն անվախ գնա՛նք պատերազմ և համարձակ մեռնե՛նք կռուի դաշտում. եթէ Աստուծոյ կամքն այնպէս է, որ ես պիտի ձեզանից առաջ մեռնեմ, այն ժամանակ թող իմ տեղը բռնէ իմ հաւատարիմ բարեկամ և ընկերակից Սլապին. հնազանդվեցէ՛ք նրան այնպէս ինչպէս հնազանդուում էիք ինձ։

«Հիմա լսեցէ՛ք նաև իմ դուցէ վերջին կամքը։

«Ո՛վ իր մեծաւորի հպատակութիւնից դուրս գայ, նա մահուան պատժի կ՚ենթարկուի. ո՛վ մի բոպէ անգամ, առանց հրամանի, իրան նշանակուած տեղից հեռանայ, նա առանց դատաստանի կ՚մեռնի. ո՛վ թուրքերից նամակ ստանայ, նա մատնիչ է,—այդպիսիներին կրակում այրեցէ՛ք, իսկ նամակը, առանց կարդալու, թուրքերին ծղեցէ՛ք. եթէ ձեզանից երկու-երեքը, վախից գաղտնի հաւաքուելով մի տեղ սկսեն իրար հետ փսփսալ, այդպիսիներին կախեցէ՛ք. մեր մեջ գաղտնիք չը պիտի լինի. քաղաքի դռան վրայ մի մեծ ծիրանի խաչ կանգնեցրէ՛ք, իբրև նշան մեր քրիստոնէական հաւատի. թող թուրքերն իմանան, թէ մենք ինչու համար ենք կռուում ու

մեռնում։ Ահա՛ ես, իբրև ձեր առաջին հրամանատարը, ծունկ եմ չոքում Աստուծոյ առաջ և երդուում եմ հաւատարիմ մնալ ուխտիս. դո՛ւք նոյնպէս երդուեցէ՛ք»։

Այս խօսքերն արտասանելով, նա առաջ եկաւ և ծունկի գալով, շարունակեց.

«Ես, իշխան Ցրինիս, երդուում եմ Աստուծոյ առաջ մինչև իմ վերջին շունչը հաւատարիմ մնալ հայրենիքին և մեր լոյս հաւատին. թող նզովուած լինեմ ես իմ մահուան ժամին, եթէ դաւաճանեմ մեր եղբայրական ուխտին և ընկեր չը լինեմ ձեզ, իմ հաւատարիմ հունգարացի եղբայրներիս թէ յաղթութիւնների և թէ մահուան մեջ։ Ուրեմն, դո՛ւք էլ երդուեցէ՛ք ձեր սրերի վրայ»։

Բոլոր զօրքը, մի մարդու նման, ծունկ չոքեց և չորս գլխաւոր զօրապետները, ի նշան երդման, իրենց սրերը դնելով Ցրինու ոտների վրայ, բացականչեցին.

— Երդուում ենք Աստուծոյ և քո առաջ հաւատարիմ լինել օրէնքին, հայրենիքին ու հաւատին և անտրտունջ հնազանդուել քո բոլոր հրամաններին։

Բոլոր զօրքը և ամբոխը կրկնեցին նոյն երդումը, հաստատ հաւատալով, որ կամ կը յաղթեն այս աշխարհում, կամ մարտիրոսական պսակ կը ստանան միւս աշխարհում։

Գիշերւայ խաւարն արդէն տիրել էր, բայց ոչ սովորական խաւարը, այլ ծիրանի, որ կարմրատակում էր այրուող գիւղերի բոցով և լուսաւորում էր աղօթող զինուորներին և նրանց սրերը։

1556 թուականի օգոստոսի 7-ին սկսուեց Սիգիդի պաշարումը։ Թուրքերի գլխաւոր նպատակն էր անպատճառ բերդն առնել, որից յետոյ նրանք կարող էին ուղղակի Վիէնայի վրայ գնալ և, մինչև կայսրը բոլոր զօրքը կը ժողովէր, տիրել նրան։ Բայց Սիգիդն առնելը նրանց կարծածից շատ աւելի դժուար էր։ Թէև թուրքերը թուով շատ էին և կռուում էին զարմանալի քաջութեամբ, բայց գրոհների ժամանակ միշտ ստիպուում էին յետ քաշուել, դեռ քաղաքի պարիսպներին չ՚հասած։ Այդ դեռ բաւական չէր, քաջ հունգարացիները ստէպ-ստէպ

դուրս էին գալիս և բաց դաշտի մէջ անապատելի արագութեամբ և քաջութեամբ յարձակւելով թշնամու վրայ, անխնայ ջարդում և կոտորում էին շատերին։

Սիգիդն ամուր կանգնած էր ինչպէս մի ժայռ և թշնամու հրոսակներն իրանց բոլոր ոյժով ծովի ալիքների նման զարնւում էին նրան։ Նրանց զօրապետները արդէն սկսել էին լքանել. սուլթանը, որ չէր սպասում այդպիսի մի անակնուռնելի դիմադրութեան իր անյաղթ զօրքերի դէմ, այն էլ այդպիսի մի փոքրիկ ու չնչին բերդից, ունքերը քաշ էր արել և բարկութիւնից ճաթում էր։ Անյաղթ սուլթանի ինքնասիրութիւնը սաստիկ վրդովւած էր... Վերջապէս, դիջելով իր զօրապետների խնդիրքին, համաձայնեց առ այժմ թողնել բերդի վրայ յարձակւելը, մինչև որ մանրամասն տեղեկութիւններ հաւաքէ դերի ընկած հունգարացի սպայից բերդի ոյժերի և միջոցների մասին։

Այդ սպան բաչ Բիլակին էր։ Կռւի ժամանակ ենիչարիների թրից սաստիկ վիրաւորւած և արիւնաքամ, նա ուշաթափւել ու դերի էր ընկել, և հիմա դլուխը կապած ու պահապաններով շրջապատւած, կանգնած էր մարգարէի փոխանորդի առաջ։

— Սատ՛ ինձ, երիտասարդ, ո՞վ ես դու, հարցրեց նրան ուղղափառների հրամանատարը։

— Ես հունգարացի եմ և քրիստոնեայ, ուրեմն քեզ երկպատիկ աւելի ատելի մի մարդ։

— Ես մարդկանց առանձին առանձին չեմ ատում. Սիլէյմանը չէ ջոկում իր ծովերի կաթիլները միմեանցից. իմ բարկութիւնը թափում եմ միայն ամբողջ ազգերի վրայ. ասա՛ ինձ, ի՞նչ դրութեան մէջ է այժմ Սիգիդը։

— Երբ տիրես նրան, այն ժամանակ և ինքդ կիմանաս բոլորը։

— Շո՛ւն, սարսուռ, բացականչեց սուլթանի մերձաւորներից մէկը, ի՞նչպէս ես համարձակւում քո տիրոջն այդպէս պատասխանել։

Շատ կարելի է, որ դու լինես նրա սարսուռը, խօսքն ընդմիջեց երիտասարդը, բայց է՛ս—երբէ՛ք։ Ազատ հունգարացիները խոնարհւում են միմիայն ամենակարող Աստուծոյ և իրենց արքայի առաջ։

Գերու համարձակ խօսքերը շատ դուր եկան Սիւլէյմանին և յաւ հատկանալով նրա գերազանցութիւնը, շարունակեց հարցուփորձ անել Բիլակուն բերդի դրութեան մասին, բայց դերին վերջ տուեց սուլթանի խօսքին ասելով.

— Սուլթա՛ն, խորհուրդ եմ տալիս քեզ թողնե՛ս Սիգիդը։ Այս պարիսպների տակ դու կը կորցնես քո բազդը. ամուր ուժի առաջ քո խմբերը չեն դիմանայ. Սիգիդում մերոնք, ճշմարիտ է, թւով քիչ են, բայց քո երեք հարիւր հազարն անգամ չի հաւասարւի իմ մի բուռն հայրենակիցներիս։ Բոլոր հունգարացիները մեռնել դիտեն իրանց երկրի և հաւատի համար. նրանք թռչունների պէս չեն մեռնում միայն կատաղի գայրոյթի ժամանակ, այլ մեռնում են ասոնասիրա, համարձակ ու հանդիսա...

— Եւ նրանք բոլորը կ՛ոչնչանան, բացականչեց սուլթանը. կը կորչեն, ինչպէս կորչում է յանդուգն լուսորդը ծովի ալիքներում և նրանց հետ յաւիտեանս յաւիտենից կը մեռնի նաև նրանց յիշատակը։

— Ո՛չ, սուլթա՛ն, նրանց յիշատակը չի՛ մեռնի, ընդհատեց նրան համարձակ դերին. նրանց յիշատակը, ինչպէս յաւիտենական մշտավառ լուսատուն, իր փառքի ճառագայթներով կը լուսաւորէ շատ երկար տարիներ յետագայ սերունդներին։ Դու՛ մեծ ես, Սիւլէյմա՛ն, քո յաղթութիւնների փառքով, բայց իմացած եղիր, երևելի զօրավա՛ր, հազարաւոր մարդկանց կեանք խաւարող, որ աւելի՛ մեծագործութի՛ւն է մեռնել հայրենիքի, հաւատի համար և իր մահով փրկել հայրենակիցներին սարկական նախատալից շղթաներից։ Բե՛ղ, սուլթա՛ն, յետագայ սերունդը կը դատէ, ինչպէս հարատահարչի, և անէծքով կը դատապարտէ. նայի՛ր, քո սարսուռները դողում են արդէն. իսկ ես՝ թշուառ դերիս, համարձակւում եմ

այստեսակ սարսափելի խօսքեր ասել սուլթանի երեսին: Այո՛, Սիւլէյման, կրկնում եմ, քեզ կը դատապարտէ յետագայ սերունդը, որովհետև դու փառքի ես հասել, ժողովուրդներ կոտորելով և հարիւրաւոր քաղաքներ ու գիւղեր այրելով. կանչիր քո դահիճներին և ինձ նրանց ձեռքը տուր. ես քո առաջ ասացի այն, ինչ որ ոչ ոք չի համարձակուել մինչ այսօր ասել քեզ...

Բայց սուլթանը դահիճներ չը կանչեց. մեռելի պէս դունատ, պրոշները բարկութիւնից դողդողացնելով, նստած էր նա, խոր մտածմանց մէջ ընկղմած. նրա ալևոր գլուխը ժամանակ առ ժամանակ տատանուում էր և աչքերը յամառութեամբ նայում էին գետին:

Բոլոր շրջապատողները լռել էին սարսափից. նրանք դողում էին իրանց հրամանատարի մինչև օրս չը տեսնուած զարհուրելի դէմքից. միայն նա, այդ գրեթէ երեխայ հունգարացի գերին, անվախ կանգնած մարգարէի սոսկալի փոխանորդի առաջ, ուղիղ նայում էր նրան և սպասում մահուան:

Երկար տևեց այդ ծանր լռութիւնը. վերջապէս Սիւլէյմանը աչքը գցեց գերու վրա ու ասաց.

— Քրիստոնեայ, դու ազատ ես. լուսնի ինչ գործն է, թէ շունը նրա վրայ հաչում է. ես քեզ կեանք եմ բաշխում. նա թանդ է միայն ինձ պէս մեծ մարդկանց համար. գնա...

Բայց քրիստոնեայ գերին մուսուլման արքայից նուէր չը կամեցաւ ընդունել:

— Զե՛մ ցանկանայ այն կեանքը, բացականչեց Բիլակին, որ արհամարհելով ես նուիրում. ինձ դու պիտի պատուե՛ս, սուլթա՛ն, կամ թէ սպանես:

— Քրիստոնեայ, ընդհատեց նրան սուլթանը, ես վաղուց է, որ մոռացել եմ մարդկանց յարգելը:

— Ուրեմն սովորի՛ր յարգել նրանց այժմ, բացականչեց գերին, գլխից պոկելով փաթեթը. թշնամու գթութիւնը չե՛մ ընդունում. թող իմ արիւնը հոսի, այստեղ, թէ կուզի դաշտում,— ինձ համար նոյնն է. այսպէս, թէ այնպէս ես մեռնում եմ հայրենիքի ու հաւատի համար. ուրեմն թող կեցցէ՞

իմ կայսրը և թող փչանան նրա թշնամիները: Այս խօսքերով արիւնաքամ երիտասարդն անկենդան ընկաւ սուլթանի ոտների առաջ:

Այս անակնուելի դէպքի առիթով սուլթանը, չը կարողանալով իրան զսպել, բացականչեց.

— Բաղդաւոր է քո հայրենիքը, եթէ քեզ պէս որդիներ շատ ունի,— և հրամայեց, որ դուրս տանեն մարմինը:

Նփոթուեց սուլթանը. այդպիսի յանդուգն ընդդիմադրութիւն նա չէր սպասում գերեւոյթի կողմից. այդպիսով քարաւիրտ բռնակալն իմացաւ, որ կան մարդիկ, որոնց պէտք է յարգէ մեղանից ամէն մէկը: Սուլթանը չը կամեցաւ նոյնպէս ի զուր ժամանակ կորցնել այդպիսի մի չնչին բերդ պաշարելու վրա. նա դրա համար չէր իր կեանքի վերջում այս պատերազմն սկսել, որով ուզում էր աշխարհ զարմացնել: Սիգիզը նուաճելու համար իր գլխաւոր վէզիր ու զինակից Մահմէտին կանչելով, հրամայեց իշխան Ցրինու հետ հաշտութեան բանակցութիւն սկսել:

— Ասա՛ նրան, ասաց սուլթանը, որ ընդդիմութիւնն անօգուտ է. թող նա իր կամքով բերդը ինձ յանձնի և ես նրան կը տամ ամբողջ Խրուաթիան և այնքան դանձ, ինչքան կամենայ. նա կը լինի իմ բարեկամը և դաշնակիցը. իսկ եթէ չի համաձայնուի, այն ժամանակ բերդն առնելուց յետոյ, մենք բոլորին էլ կը կոտորենք, ոչ ոքի չենք խնայի, ոչ ծերերին և ոչ մանուկներին. մեր ծառաների բռնաբարութեանը կենթարկենք նրա կնոջն ու աղջկանը... Իսկ եթէ այն ժամանակ ևս չը համաձայնուի, ասա՛, որ նրա միակ սիրելի որդին գերի է բերուած մեզ մօտ. և եթէ Ցրինին իսկոյն բերդը չը յանձնէ մեզ, նրա որդու համար ես այնպիսի տանջանքներ կը հնարեմ, որ գեռ աշխարհը տեսած չլինի: Գնա՛ և առաջարկիր այն դոռոզին, թող ընտրէ երկուսից մէկը. կա՛մ լինել խրուաթների թագաւոր, կամ տեսնել իր որդու մարմինը պատառուած... Եւ եթէ այն ժամանակ ևս չը համաձայնուի բերդը տալ, այն

ժամանակ միայն ես կը խոստովանեմ, թէ մինչև այժմ մարդկանց չեմ ճանաչել։

Մինչ այս մինչ այն ամբողջ Սիզիզը համարեա թէ քանդուել էր պաշարումից. հին պարիսպներն այլևս չէին կարող երկար դիմանալ Թուրքերի դնդակներին. ամեն րոպէ կարելի էր սպասել, որ ահա պատերը կը թափուեն և, Թուրքերը քաղաք մտնելով, կը սկսեն խաղաղ բնակիչներին կոտորել. ամուր էր միայն բերդը իշխանական ամրոցով։ Այքի առաջ ունենալով այդ, իշխանը հրամայեց բնակիչներին իրանց ունեցած-չունեցածը տեղափոխել բերդը, իսկ քաղաքն այրել, որ Թշնամու ձեռքը չ'ընկնի։ Ծանր էր ծերունի իշխանի համար իր ձեռքով ոչնչացնել այն քաղաքը, որ այնպիսի հոգածութեամբ շէնացրել էր իր սիրելի ժողովուրդի բարօրութեան համար. բայց վտանգը մօտ է և ալևոր Սլապին արդէն հրամայում է նախօրօք ամեն տեղ կրակ և ծիւթ պատրաստել, որ իշխանի նշանով ամէն կողմից միաժամանակ կրակ տրուի քաղաքը։

Կանգնած է իշխանը լուսամտի առաջ. նայում է վերջին անգամ իր ծեռակերտին. շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ նա ծաղկած դրութեան մէջ էր. իսկ այժմ... նայում է իշխանը և արտասուքի կաթիլները իրար ետևից գլորուում են նրա խոժոռ աչքերից...

Իսկ սուլթանի գեսպան Մահմէտը, որը արդէն բերդն էր հասել, մտնում է իշխանի մօտ և խոստանում է սուլթանի անունով հազարաւոր բարիքներ, միայն թէ նա բերդը յանձնի Թուրքերին։

Հանդիստ լսում է Ցրինին Մահմէտի խօսքերը և պատասխանում է, ինչպէս վայել է քաջին։

— Ես Ցրինին եմ. ահա իմ պատասխանը սուլթանին։ Եթէ նա ինձ յարգում է, ինչու է ինձանից մատնութիւն պահանջում. թող ամբոցը ուժով առնի և յետոյ ինչ ուզում է, թող անի. իսկ ես կը կատարեմ այն, ինչ որ իմ պատուի զգացմունքն ու պարտքը ինձ պատուիրում են։

Մահմէտը, որը դիտմամբ ժամկում էր մինչև այժմ, պատ-

մեց, թէ ինչ է սպասում իշխանի կնոջն ու աղջկանը, եթէ նա չը համաձայնուի անձնատուր լինել. բայց իշխանը անողոքելի էր։

— Խե՛ղճ Թուրք, ընդհատեց նա Մահմէտին, դու դեռ չես իմանում մեր կանանց վեհութիւնը, նրանք գիտեն իր ժամանակին մեռնել։

Այն ժամանակ Մահմէտը, տեսնելով որ ծերունուն էլ ոչ թագն է դրաւում, ոչ կնոջն ու աղջկայ մահը վախեցնում, պատմեց գերի ընկած որդու մասին և ինչ որ սպասում էր նրան։

Ծերունին ձեռքով երեսը ծածկեց և նրա բերանից դուրս թռան այս խօսքերը.

— Ի՞մ որդի՞ն, ի՞մ Գէորգը... ո՞վ Տէր Աստուած, դա՞ն է քո բաժակը...

— Ոչ, համաձայն ես որդուդ մահին, ասաց Մահմէտը, կարծելով, թէ վերջապէս յաղթեց իշխանին։

Ես վաղուց ամէն բան վճռել եմ... հայրենիքիս ես չեմ դաւաճանի. չարչարեցէք, սպանեցէք, կտոր կտոր արէք նրան... Գէորգը իմ որդին է, նա պատուով կը մեռնի...

Եւ այս խօսքերն արտասանելով, նա դիմեց դէպի դուռը ու կանչեց.

— Կրակ տուէք նոր քաղաքը, թող այրուի. Եւա, բարեկամնե՛ր, ամենքդ եկէ՛ք այստեղ։

Եւ վէղիրի առաջ դուրս եկան իշխանի կինը, աղջիկը և հունդարացի զօրավարները, որոնք հարևան սենեակում սպասում էին բանակցութեան ելքին։

Ցրինին՝ արտասուոր ողևորութեան փայլը երեսին, դիմեց նրանց.

Բարեկամնե՛ր, դուք ինքներդ պատասխան տուէք այս Թուրքին, որ համարձակում է առաջարկել մեզ մատնիչ լինել. մի՞թէ մեր կամքով չերդուեցի՞ք Աստուծոյ առաջ մեռնել մեր սուրբ հայրենիքի համար։

Բոլոր զօրավարները միաձայն բացականչեցին, — այո, մեր կամքով։

— Իսկ դուք, կանայք, պատրաստ էք մեռնելու ձեր պատուի և սուրբ հաւատի համար։

— Ես ուրախութեամբ դերեզման կը մտնեմ քեզ հետ ասաց Եւան։

— Զինուորի հարսին մահը չէ՛ կարող սարսափեցնել, ասաց Հեղինէն։

Եւ Ցրինին գրկեց կնոջն ու աղջկանը։

Այդ ժամանակ քաղաքն արդէն այրուում էր և հրդեհի ճառագայթները լուսաւորել էին թէ՛ պատուհանները, թէ՛ այդ ապշած և հիացած պատգամաւորին և թէ զիւցազներին ու զիւցազնուհիներին, որոնք պատրաստ էին ուրախութեամբ մեռնել հայրենիքի համար։

— Այժմ, վէզի՛ր, ասաց ծեր իշխանը, կարող ես յայտնել սուլթանին, թէ ի՞նչ է մտածում Ցրինին։ Ասա, որ բոլոր ժողովուրդը նրա հետ համաձայն է և մինչև սուլթանի բանակը յետ դառնալը այս այրուող քաղաքը կը յայտնէ նրան, թէ Ցրինին մահը նախատինքից գերադաս է համարում, թէ նրա համար աւելի թանգ է պատիւը, քան աշխարհի բոլոր հարստութիւնները, թէ հայրենիքն աւելի թանգ է նրա համար, քան մինչև անգամ իր միակ որդին. այժմ եկէ՛ք. մենք պատրաստ ենք ձեզ ընդունելու, մեզանից ո՛չ ոք կենդանի ձեր ձեռքը չի ընկնի. շղթաները մեզ չե՛ն ծանրաբեռնի և այս աւերակները մեզ դերեզման կը լինեն...

Այսպէս պատասխանեց իշխան Նիկոլա Ցրինին սուլթանի մեծ դեսպանին։

Սուլթանին սաստիկ ապշեցրեց թէ Ցրինու պատասխանը և թէ այրուող քաղաքը, որ պարզ ցոյց էր տալիս, թէ պաշարուածները վճռել են մինչև արեան վերջին կաթիլը ընդդիմադրել թշնամուն։

Բայց Մահմէտի բերած լուրը միանդամայն խանդարեց 70 տարեկան, առանց այն էլ տկար ու զառամեալ ծերունու

առողջութիւնը։ Սաստիկ յուզուած, տենդային կրակ ցայտող աչքերը արիւնով լցուած, նա շնչասպառ ձայնով հրամայեց նորից յարձակուել Սիգիղի վրա։ Բայց այդ երկրորդ յարձակումն չը յաջողուեց. չյաջողուեց նաև երրորդ, չորրորդ և հինգերորդ յարձակումը։ Վերջապէս նոր քաղաքի պարիսպը պայթեցրին։ Այն ժամանակ Ցրինին փակուեց ամրոցում. բայց և այնպէս, դարձեալ անհնար եղաւ տիրել քաղաքին։

Այդպէս ամբողջ ամիս շարունակուեց պաշարումը։

Սպաւուեց սուլթանի վերջին ոյժը, մաշուեց նրա կեանքը։ Հրամայեց համարել բոլոր սպանուածներին։ Պատերազմի դաշտում դատն միայն հինգ հարիւր հունգարացու դիակ, իսկ թուրքերից արդէն կոտորուել էր մի քանի հազար։ Այդ ամէնը այնպէս ազդեց սուլթանի վրայ, որ ամենևին յոյս չը կար թէ նա կարող է ապրել և օրէցօր սպասում էին նրա մահուան. բայց և այնպէս, նա կատաղի յուսահատութեամբ կռուում էր մահուան դէմ և դեռ յոյս ունէր իր փառաւոր կեանքի վերջին բոպէները պսակել պանծալի յաղթութեամբ. թոյլ ձայնով նա դեռ ևս հրամաններ էր տալիս աւելի և աւելի սաստիկ յարձակումներ անել Սիգիղի վրա։ Մի քանի վէզիրների հրամայեց դլխատել, որոնք իբր թէ մեղաւոր էին այդ անաջողութիւնների համար. այսպիսով իր վերջին բոպէները նա թունաւորում էր իր հաւատարիմ ծառաների արիւնով։

Սակայն մահն արդէն մօտ էր. նա լուր է ստանում, թէ սուլթանի զօրքերը, բազմաթիւ անհեռանք յարձակումներից թուլացած, փախան պատերազմի դաշտից, թէ սուլթանի դաշնակից Եգիպտոսի փաշան ընկաւ պատերազմի դաշտում, և թէ մահն ամէն տեղ կոտորում է թուրքերին. մի խօսքով, մինչև այդ բաղդաւոր համարուած թիւրքիայի անմաղթ և անարկու սուլթանը ամօթալի կերպով յաղթուած էր։ Քաջի սիրտը չը դիմացաւ այս վերջին հարուածին. հաւաքելով իր վերջին ոյժերը, նա դուռաց սոսկալի լուրը բերող վէզիրի վրա և հրամայեց նորից յարձակուել և երբ վէզիրն

ուղղակի յատնեց, թէ զօրքերը չեն կամենում մի անգամ էլ յարձակում գործել, սուլթանը դաշոյնը խրեց նրա կուրծքը և ինքը բարկութիւնից թուլացած, հառաչելով վայր ընկաւ ու մի քանի բոպէից յետոյ արդէն մեռած էր։

Երէք վէզիրների, սուլթանի մահուան միակ վկաների առաջ, այժմ ընկած էր չարութիւնից և մահուան տանջանքներից այլանդակուած դիակը, որից մի քանի ժամ առաջ դողում էր ամբողջ աշխարհը։ Սուլթանն այլ ևս չը կար, բայց նրա ահարկու ոգին դեռ թագաւորում էր ամբողջ զօրքի վրա. և ահա վէզիրները վճռեցին ծածկել զօրքից Սիւլէյմանի մահը, որ նրանց սիրտը չը թուլանայ։ Դաղանի կերպով դեսպաններ ուղարկեցին Կ. Պոլիս թագաժառանգի մօտ. դիակին հագցրին թանկագին շորեր, օծեցին անուշահոտ իւղերով և, սուրը ձեռքը տուած, մութ ժամանակ ցոյց տուին հեռուից նրա անկենդան մարմինը, որպէս թէ կենդանի է և նստած է գահի վրա։ Ապստամբուած և խմբուած զօրքը սարսափեց իր տիրոջից և գնաց վերջին յարձակումը գործելու։

Հին ամրոցը, հունգարական այդ վերջին պատսպարանը, որտեղ փակւել էր Ցրինին իր ընտանիքով և մի բուռն քաջերով, անխուսափօրէն պիտի առնուէր շուտով։ Իր և ընկերների կողմից Ցրինին արդէն վճռել էր, որ բոլորն էլ կը մեռնեն ու կենդանի թշնամու ձեռքը չ՛ն ընկնի, իսկ կանանց մասին նա դեռ տատանւում էր։ Նա թագցրեց նրանց նկուղում. բայց միայն մի քանի օրուայ պաշար կար, այն էլ միայն կանանց համար. բացի այդ, երբ ամրոցը քանդւեր թուրքերի զնդակների հարուածներից, այդ ապաստանարանն անպատճառ պիտի յայտնւեր թշնամուն, այդ պատճառով Ցրինին վճռեց փրկել իր կնոջն ու աղջկանը։

Ծերունի Ջերնիկը, նրա մանկութեան դաստիարակը, դաել էր մի ստորերկրեայ անցք, որ այդ նկուղից տանում էր դէպի լիճը։

Էգուց, լուսարացին, ասաց Ցրինին կանանց, դուք այստեղից դուրս կը գաք. լճից մինչև անտառը հազիւ թէ երկու

հարիւր քայլ լինի. իսկ այնուհետև շտապեցէք գաղտնի ճանապարհներով կայսերական բանակը և հաղորդեցէք կայսրին, որ Ցրինին ընկաւ, ինչպէս իր հայրենիքին հաւատարիմ որդի, ու Սիգիդի աւերակներում փառաւոր գերեզման գտաւ։ Հանդի՛ստ եղէ՛ք, ես ամեն բան կը պատրաստեմ,— Իբրանիչը, իմ Հեղինէի փեսացուն, ձեր ուղեցոյցը կը լինի։

Բայց Իբրանիչը, որը իշխանի հետ այդտեղ ներկայ էր, ընդհատեց նրան, ասելով.

— Դո՛ւ, Ցրինի՛, ասաց նա, դաստիարակել ես ինձ, դո՛ւ ես սովորեցրել ինձ սուր սուեր գործ ածել, դո՛ւ ես արմատացրել իմ մէջ պատւի ու պարտաճանաչութեան զգացմունքը դո՛ւ, վերջապէս, ինձ կնութեան ես տալիս քո աղջկանը, քո անգին գանձը,— և դո՛ւ ի՞նքդ ստիպում ես ինձ նախատելից յանցանք գործել. ո՛չ, չե՛ս կարող դրկել քո որդուն ամենաքաղցր երջանկութիւնից — հայրենիքի համար փառաւոր մահից. ո՛չ, հայր, ես զինւոր եմ, ես երդւել եմ հաստատ մնալ իմ դրօշակին և պիտի մեռնեմ քեզ հետ։

— Աղնի՛ւ երիտասարդ, դու իմ որդին ես, ուղիղ է, բայց, այնու ամենայնիւ, դու նրանց պիտի ուղեկցես..... Նայի՛ր այդ խեղճ արտասուող աղջկան, նա քո հարսն է... նա քեզանից սեր է խնդրում... ապրի՛ր, որդի՛ս, և բաղդաւորացրու դրան, որ իր սիրտը քե՛զ է նուիրել։

— Այո՛, ես նրան նուիրել եմ իմ սիրտը, բայց հայրենիքիս տւել եմ իմ պատիւը. այդ վերջին պարտքը ես ամեն բանից առաջ պիտի վճարեմ։ Իմ հոգին, իմ մի՛տքը, իմ բոլոր զգացումներս նուիրել եմ քե՛զ, ի՞մ Հեղինէ, բայց իմ կեանքը պատկանում է այժմ հայրենիքին. ես այնտեղ, միւս աշխարհում, յաւիտեան քոնը կը լինեմ, բայց այստեղ, այս աշխարհում, ես պարտաւոր եմ ծառայելու իմ պարտաճանաչութեան և երդման։ Փախէ՛ք առանց ինձ, մտաբերեցէ՛ք ինձ այն բոպէներին, երբ ձեր կսկիծը մեղմանայ և մի կաթիլ արտասուք այն մարդու յիշատակին, որը ձեզ այնպէս անկեղծ ու կաթոգին սիրել...։ Դուք լայց էք լինում..... ո՜հ, հաւատացի՛ր, Հեղինէ՛, որ քեզ

նոյնքան սասարիկ եմ սիրում, որքան դու ինձ և դրա համար էլ կեանքս զոհում եմ...:

Բայց կանայք ականջ չարին ոչ Ցրինուն, ոչ Իւրանիչին, հաստատ մնալով իրանց վճռին. նրանք նորից սկսեցին աղաչել իշխանին, որ թոյլ տայ մեռնել հայրենիքի համար, այն մարդկանց հետ միասին, որոնք իրենց համար այնքան թանդ են եղել և առանց որոնց կեանքը ոչ մի ուրախութիւն չէ խոստանում...: Նրանց խնդիրքը մերժող Իւրանիչը այժմ հպարտութեամբ տեսնում էր, թէ որքան հոգեկան ոյժ է թաղնուած եղել այդ աղջկայ մէջ, որին նա մինչև այժմ համարում էր միայն ընդունակ ընտանեկան կեանքի խաղաղ խնդութիւններին, բայց որին սէրն այժմ դիւցազնուհի էր դարձրել..... Ծեր իշխանը չը կարողացաւ դիմանալ այդ աղերսանքներին և գրկելով կնոջն ու աղջկանը, շնորհակալ էր լինում Աստծուն, որ նա, արդարների Աստուածը, այդ կանանցն այդպիսի հոգի էր տուել: Բայց ոչ Իւրանիչը և ոչ Ցրինին դեռ չէին իմանում, թէ ի՞նչպէս մնոնել դիտեն այդ թոյլ կանայքը:

Մութ նկուղը լուսաւորուած է ջահի լոյսով: Ցրինին հագնում է վերջին հանդիսի համար իր ամենալաւ և թանկագին հագուստը, այն հագուստը, որով նա դուրս էր եկել ժողովրդի առաջ, երբ առաջին անգամ յաղթում էր թուրքերին Վիէնայի մօտ. միևնոյն հագուստով նա պսակուել էր իր առաջին կնոջ հետ. այդ հագուստն էր հագին, երբ անցնում էր Վիէնայի փողոցներով, ժողովրդից շրջապատուած, որ ցնծալից աղաղակներով ողջունում էր նրան, իսկ նա գնում էր պսակուելու իր երկրորդ, այժմեան կնոջը հետ...: Չինաւորից ծերունի Ջերնիկը, նրա դաստիարակը, ինչպէս սովորաբար հանդիսաւոր օրերում օգնում, հագցնում էր իր սիրոջը այնպէս էլ այս անգամ հագցնում էր նրան ու լաց լինում:

— Ահա, իշխան, ասում է Ծերունին, արտասուքը երեսին, ահա թէ ի՞նչ օրի հասայ. կարող էի մի թէ կսրծել, երբ ձեզ զարդարում էի ծեր անթառամ պսակի համար, որ կը դայ

ժամանակ, երբ կզարդարեմ ձեզ նաև վերջին արիւնալից խնջոյքի համար. կարող էի մի թէ մտածել, որ այս հանդիսաւոր հագուստը ձեզ համար պիտի և թաղման պատան դառնայ...: Այ թէ ի՞նչ օրի հասայ...:

— Լաց մի՛ լինի, ծերո՛ւկ, լաց մի՛ լինի, իմ Ջերնիկ հաւատարիմ, ընդհատեց իշխանը. դու դեռ մինչև այժմ սրանից աւելի լաւ խնջոյքի համար չես պատրաստել ինձ. դու դեռ չես տեսել այնպիսի յաղթանակ, որ ես այսօր պիտի տանեմ. այսօր ինձ համար մեծ օր է և հէնց դրա համար էլ ես հագնում եմ իմ այս շորերը. երկու անգամ պսակուել եմ այս հագուստով, և այսօր երրորդ անգամն է, որ պատրաստուում եմ երկնային պսակին արժանանալու. ուրեմն տուր ինձ իմ սուրը:

— Ո՞րը, իշխա՛ն, ասում է աչքերը սրբելով հաւատարիմ ծերունին:

— Բոլորը բե՛ր այստեղ, ես ինքս կը ջոկեմ:

Ջերնիկը բերաւ իր տիրոջ բոլոր սրերը և սկսեցին տէր ու ծառայ մտաբերել, թէ նրանցից ո՞րը ո՞ր պատերազմումն է գործ դրել: Ահա այս սրով Ցրինին Բեշթի առաջ էր յաղթութիւն տարել, բայց այսօրուայ համար նա շատ ծանր է. սրանով նա պատերազմել էր Էսէնգի մօտ.... նա հաւատարիմ էր ծառայել, բայց նա էլ փոքր է, իշխանը աւելի լաւ է վեր կառնէ ահա այս թէթև սուրը... այդ ընծայել է Ներան Վիէնայի առաջ նրա հայրը. այդ սուրն է տուել նրան առաջին յաղթութիւնը, առաջին պատիւը և այդ սուրը կը տայ նրան այսօր և՝ վերջին պատիւը: Եւ երկար ժամանակ սուրը ձեռքին բռնած, իշխանը նայում է նրան. վերջը բացականչում:

— Քե՛զ հետ, իմ աղնիւ թուր, ես կերթամ այսօր վերջին պատերազմ. թող Աստծու կամքը օրհնեալ լինի... երդւում եմ քեզնով, իմ հաւատարիմ սուր, որ թշնամիները ինձ կենդանի չե՛ն բռնի, չե՛ն քաշ տայ ինձ իրանց բանակը ի խայտառակութիւն իմ այն սակաւաթիւ ընկերների, որոնք դեռ կենդանի են և որոնք այժմ ինձ հետ միասին պատերազմ են

գնում, այս երդումը ես այնպէս սուրբ կը պահեմ, ինչպէս սուրբ է Աստուած և մեր սուրբ հաւատը։

— Իսկ ո՞ր զրահը կը հրամայէք տալ,—հարցրեց Ջերնիկը։

— Ինձ զրահ հարկաւոր չէ՛, ես զուրս կը գամ թշնամու առաջ առանց զրահի, բաց կրծքով. ես ուզում եմ մահուան վերջին բոպէին պատերազմի դաշտում լինել նոյնքան ազատ, որքան խնջոյքում, ուզում եմ նայել մահուան երեսին առանց ծանր զրահի։

Եւ մերժելով զրահը, իշխանը պինդ կապեց միայն լայն գօտին և թագցրեց նրա մէջ ամրոցի բանալիները և հարիւր ոսկի։

— Շները թող չասեն, ասաց իշխանը, դնելով ձեռքն իր ծերունի պաստիարակի ուսին, որը ժպտում էր արտասուքի արանքից, թող չասեն շները, որ զուր աշխատեցին իշխան Ցրինու շորերը հանելու. ես թշնամու ձեռք կենդանի չեմ ընկնի։

Եւ այդ պերճ ու շքեղ հագուստով ու փայլուն դէմքով իշխան Ցրինին դուրս եկաւ իր կնոջ ու աղջկայ մօտ։ Կինը ճանաչեց իսկոյն հագուստը, մտաբերեց իր հարսանիքը և սկսեց հեկեկալ։ Ամուսինը զարմանալի հանդգնութեամբ շնորհակալ եղաւ իր թանկագին կնոջից այն լաւ բոպէների համար, որ նա պարգևել էր իրան. քնքուշութեամբ մխիթարում էր նրան այն մարտիրոսական պսակի վեհութեամբ, որ նրանք միասին պատրաստում էին իրանց համար, և ապա գառնալով դէպի իր աղջիկը, որը ափսոսում էր կեանքը, շարունակեց։

Մի՛ վիճի Աստուծոյ հետ, աղջի՛կս, շնորհապարտ եղի՛ր նրա հայրական ողորմածութեան համար, որ այդպիսի դաժան ժամանակներում մեր սրտերը ոսկու նման զուտ ու մաքուր պահեց։ Միայն տառապանքների մէջ հաստատւում է մարդուս մեծութիւնը. մտաբերի՛ր այն, ինչ սովորել ես պատմութեան մէջ. բոլոր հերոսները, անցած ժամանակների բոլոր երևելի մարդիկ, որոնցով աշխարհս հպարտանում է մինչև այ-

սօր ամենքը դառն նեղութիւններ կրելով են անմահացել. միմիայն դժբաղդութիւնն է մեծ սրտեր ստեղծում.... Ապա գառնալով իր կնոջը, ասաց.

— Ե՞րբ կը կտեսնենք մէկ էլ, իմ թշուառ կողակից։

Եւան պատասխանեց.

— Այնտեղ՝ երկնքում զուր կը հանգիստ քեզ պէս քաջ ամուսնուն արժանի կնոջդ, միայն այնտեղ կը սպասեմ քեզ. իմ վճիռը հաստատ է։

— Իսկ մեր աղջիկն ինչ կը լինի,—ասաց Ցրինին, չը կարողանալով այլ ևս զսպել իրան։

Աղջիկը պատասխանեց.

— Իմ մասին մի՛ մտածիր, հայրի՛կ. ես ծեղանից առաջ կը լինեմ երկնքում, իմ փեսան ինձ չի՛ մերժի իր վերջին համբոյրը։ Նա գիտէր թէ ինչ էր ասում։ Այդ բոպէին նրանք անցան նկուղը, նոյնպէս առանց զրահի։

Իսկ Սլապին և Հապրուդովիչը, միակ կենդանի մնացած զօրավարները, և երիտասարդ Իւրանիչը յայտնեցին Ցրինուն թէ դեռ ևս կենդանի մնացած խումբը հաւաքել է զրանը և ուզում է վերջին անգամ իր գլխաւորին տեսնել։

Դողդոջուն ձեռով օրհնեց ծեր իշխանը իր կնոջն ու աղջկան, տուեց նրանց վերջին համբոյրը ու միայն այստեղ, չը կարողանալով իրան զսպել, լաց եղաւ. բայց զրսից այդ բոպէին լսեցին փողի և թմբուկի ձայներ և նա շտապով զրկելով աղջկան, որին այդ բոպէին միայն նշանեց Իւրանիչի հետ, արագ քայլերով զուրս գնաց իր կնոջ և զօրավարների հետ, թողնելով, որ նշանածներն ազատօրէն իրար մնաս բարև ասեն։

Մնաս բարևը երկար չը տևեց. հօր ու մօր զիւցազնական օրինակը, սիրած փեսի օրինակը, որ գնում էր հայրենիքի համար այնպէս մեռնելու, ինչպէս ուրիշները հարսանիք կը գնան, այդ թոյլ օրիորդին այնպիսի հոգեկան ոյժ էին ներշնչել, որ նա պատրաստ էր զոհել իր անձը։ Ապագան խոստանում էր նրան միայն գերութիւն իր բոլոր նախատինքներով և նա

աւելի բարձրք համարեց մի քիչ վաղ մեռնել այն մարդու ձեռքով, որին այնքան սրտագին սիրում էր: Թշնամու ձեռքը չընկնելու համար նա աղաչեց իր փեսացուին, որ իրան սպանի: Փեսան երկար չը տատանուեց. առաջին ու վերջին անգամ համբուրեց և դաշոյնը խրեց նրա սիրտը. այսպիսով նա փրկեց իր սիրածի պատիւը: Հեղինէն մեռաւ, օրհնելով իր սպանողին, օրհնելով իր մօրը, հօրն ու հայրենիքը. մեռաւ նա իր փեսայի գրկում.... Իսկ փեսան գրկելով նրա մարմինը, տարաւ ու թաղցրեց մի դաղտնի խոր մառանում, որ ո՛չ ոք չը կարողանայ մինչև անգամ հետը գտնել. իսկ ինքը ամուր և հաստատ քայլերով դուրս եկաւ ամրոցի դուռը:

Այդ ժամանակ դռանն արդէն հաւաքւել էին բոլոր կենդանի մնացածները, որոնք ընդունակ էին դեռ զէնք կրելու: Եւան նոյնպէս այդտեղ էր ջահը ձեռքին՝ պատրաստ վերջին քաջագործութեան. զինուորներից մէկի ձեռքում ծածանւում էր սրբազան դրօշակը. երկու մեծ թնդանօթ պատրաստ էին քաղաքի դռների առաջ ու դրուած էին շարժական և դեռ նոր կառուցած կամուրջի վրա: Ամբոխը նկատելով, որ Ցրինին ուզում է խօսել, լռեց իսկոյն և իշխան Նիկոլա Ցրինին սկսեց իր վերջին ճառը զինակիցներին:

«Բարեկամնե՛ր.

«Վերջին անգամ, մահից առաջ, լսեցէ՛ք, թէ ի՞նչ կասէ ձեր զօրավարը. դուք չը դաւանեցի՛ք ձեր երդման. դուք ազնւաբար ծառայեցի՛ք ձեր երդման. դուք ազնւաբար ծառայեցի՛ք ձեր հայրենիքին և մատնիչներ ձեր մէջ չեղան: Զրկայ ո՛չ մէկը ձեր մէջ, որ պատրաստ չը լինի ուրախութեամբ մեռնելու հայրենիքի համար. եղբայրնե՛ր, շնորհակալ եմ ձեզանից: Այժմ հասել է, ո՛վ ընկերնե՛ր, մեծ և օրհասական ժամը. գնե՛նք մեր մահով մարտիրոսական անթառամ պսակը: Մինչև այժմ մենք բաւական աշողակ կերպով կռւում էինք

մեզանից թւով անհամեմատ թշնամու դէմ և սուլթանը այստեղ կորցրեց քսան հազար ընտիր զօրք,—բայց այժմ մեր դէմ բարձրացել է մի ուրիշ թշնամի, որին չի կարելի յաղթել ո՛չ ուժով, ո՛չ էլ քաջութեամբ. մեր ամուր պարսպի խրամատները խորտակւած են և հրդեհը լափում է ամրոցը... սոսկալի տարրն է կռւում այժմ մեզ հետ. մենք միայն մի օրուայ ուտելու պաշար ունենք, նորանից յետոյ մենք կամ պիտի այրւենք, կամ մեռնենք քաղցից, կամ պիտի անձնատուր լինենք. բայց նախատինքի դնով մեր կեանքը չե՛նք գնի: Ամենիւ մարդը հաւատարիմ կը մնայ հայրենիքին. գնա՛նք եղբայրնե՛ր, գնանք բաց դաշտը, գնանք մահւան դէմ զէնքը ձեռներիս.....»:

Ամենքի միաբերան հիացմունքի թնդիւնները պատասխան եղան Ցրինու խօսքերին:

— Ո՞ւր է Հեղինէն, հարցրեց Ցրինին Իւրանիչին, որը այդ բոպէին դուրս էր գալիս նկուղից:

— Նա երկնքում քեզ համար պսակ է պատրաստում, շուտով, հայր իմ, կը տեսնւենք նրա հետ,—պատասխանեց Իւրանիչը:

— Իսկ դո՛ւ, Եւա՛, ինչ կերպ ես ուզում ինձնից բաժանւել, ասաց Ցրինին դառնալով կնոջը:

— Ես կը բարձրանամ աշտարակի գլուխը և այնտեղից կը դիտեմ մեր կռիւը, և երբ նկատեմ, որ դու ընկար—կը վառեմ քո թաղման ջահը և կը ձգեմ վառօդի շտեմարանը. այն ժամանակ թող թշնամին տիրէ աւերակներին, եթէ կամենում է:

— Մեռի՛ր ուրեմն, դիւցազնուհի՛, բացականչեց Ցրինին. քո անունն անմոռաց կը մնայ մինչև աշխարհի վերջը:

Պաշարող թուրքերի ձայները խլացրին իշխանի խօսքերը. իշխանը զինուորի ձեռքից խլեց դրօշակը, տւեց Իւրանիչին ու վերջին անգամ գրկելով Եւային՝ «Տնաս Բարով Սնգէ՛ր, Տնաս Բարով ընկերնե՛ր, Տեռնենա Հայրենի Երկրի և Հաւատի Համար»

ասելով, վայր ծգեց կամուրջը և դռները բանալով, հրամայեց թնդանօթները արձակել։

Ծխի քուլաները բոպէապէս ծածկեցին կամուրջով վազող հունգարացիներին.... իսկ երբ նրանք դաշտ հասան, տեսնեց սարսափելի յուսահատական ճակատամարտը.....

Եւան վառած ջահը ձեռքին, նրա լուսով ողողուած, կանգնած է աշտարակի գլխին և անշարժ դիտում է մարանչողներին։

Իրար ետևից ընկնում են հարիւրաւոր Թուրքեր, ընկնում են և հարիւրաւոր հունգարացիներ. Իւրանիչը բոլորի առաջ դրօշակը ձեռին կռուում է առիւծի նման... Ահա՛ ընկաւ ծերունի Սլապին, նրա ետևից Հապրուդովիչը...։

Իսկ Եւան կանգնած աշտարակի վրա, դեռ նայում է... բայց ահա՛ ընկաւ վերջապէս նաև քաջ Իւրանիչը և նրա հետ շատ հունգարացիներ. նա տեսնում է, թէ ինչպէս մի ծերունի փայլուն, ոսկեզոծ հագուստը հագին, կռուողների միջով համարձակ անցնում է դէպի երիտասարդի դիակը, իր Թեթև Թրով աջ ու ձախ կոտորելով Թշնամուն, տեսնում է, թէ ինչպէս հասաւ նա դիակին ու Թռաւ միւս կողմը, բայց այդ րոպէին մի Թուրք իր Թրով ճեղքում է գլուխը և փայլուն հագուստով ծերունին ընկնում է երիտասարդի դիակի վրա։

Այդ ժամանակ Եւան ցատկելով իր տեղից, ջահը գցեց վառօդի պահեստը։

Երկիրը սարսափելի դղրդաց, և երբ ծուխը, որը ծածկել էր թէ՛ ամրոցը և թէ կռուի դաշտը, ցրուեց,—փառաշէն Սիգիզի տեղ երևացին միմիայն մխող աւերակների կոյտեր.....

Բագուի Հայոց Հոգեմտաւոր Դպրոց

ՀՀ Ազգային գրադարան
NL0325257

14.571

Ռուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում (սպառված է).	5 կոպ.
Բոլգար աւազակապետը (սպառված է).	5 „
Ժաննա-Դարկ, Գաղիայի ազատող (սպառված է).	3 „
Նեղա, Տատիս պատմածը (սպառված է).	5 „
Դանչո, Բոլգար աւազակապետի պատմածը (սպառ.)	
Վիլհելմ Տելլ բ-րդ հրատ.	5 „
Գաղթական	3 „
Մենաքէմ Գամաղացու պատմութիւնը	5 „
Վերջին դաս	2 „
Ցրիներ բ-րդ հրատ.	5 „
Լծի տակ ա. հատ.	1 ր. „ „
Փոքրիկ լրտես բ. բդ հրատ.	3 „
Զորս պատմուածք	1 „
Լծի տակ բ. հատ. (մամուլի տակ)	60 „

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ